

**«Հայ գրականությունը եվրոպական լեզուներով» եւ
«Եվրոպական գրականությունը հայերեն
թարգմանություններում»**

«Բարեբախտաբար, գոյություն ունի խիղճը, այլապես մենք շատ դժբախտ կլինինք: Ամեն մի եռանդոտ արարքից հետո մեզ փրկում է մեր խիղճը. Նա մեզ համար գտնում է հազար ու մի արդարացում, որոնց դատավորները մենք ինքներս ենք լինում: Եվ թեպետ այդ փաստարկները պահպանում են մեր հանգիստ քունը, նրանք թերևս մեր կյանքը չպահպանեն քրեական դատարանի դատավճռից» Ալեքսանդր Դյումա «Կոմս Մոնտե Քրիստո» Ալեքսանդր Դյումայի (Յաղեքսանդր Տիմայե) «Կոմս Մոնտե Քրիստո» ֆրանսիական դասական արկածային վեպի հայերեն ամենահին թարգմանություններից մեկը արվել է Տիգրան Յարութիւն Տետէեանի կողմից. Զմյուռնիայի Տետէեան տպարանում 1866-1875 թվականներին տպագրվել են աշխատության տարբեր մասեր:

Գրքի 1866 թվականի հրատարակությունը, բազմաթիվ այլ եզակի հրատարակությունների կողքին ցուցադրված է Հայաստանի ազգային գրադարանի թամանյանական մասնաշենքի մեծ ցուցասրահում: «Հայ գրականությունը եվրոպական լեզուներով» եւ «Եվրոպական գրականությունը հայերեն թարգմանություններում» խորագրերը կրող գրականության ցուցադրությունը կազմակերպել է Սպասարկման բաժնի Ընդհանուր ընթերցասրակը՝ [Եվրոպական Ժառանգության օրեր](#) ամենամյա ծրագրի շրջանակում:

«Ցուցադրվող գրականության ընտրությունը կատարել ենք ընթերցողների պահանջներն հաշվի առնելով: Գաղտնիք չէ, որ այսօր մեր երիտասարդները նախընտրում են կարդալ եվրոպական դասականներին: Իսկ թարգմանությունները ցուցադրելով, մենք նպատակ ունենք ընթերցողին ներկայացնել գրադարանի

հարուստ ֆոնդերից թարգմանական գրականության մի փոքր մաս»,- նշում է Սպասարկման բաժնի վարիչ Անահիտ Քեհեյանը: ՁԱռանձին ցուցափեղկերում ներկայացված է գերմանական, ֆրանսիական, անգլիական, իտալական, իսպանական թարգմանական գրականությունը: Մեծ թիվ են կազմում նաև հայ հեղինակների՝ Եղիշե Չարենցի, Պարույր Սևակի, Մովսես Խորենացու, Շահան Շահնուրի, Ակսել Բակունցի, Ավետիկ Իսահակյանի և այլոց թարգմանությունները եվրոպական լեզուներով՝ մասնավորապես անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, իսպաներեն և այլն: Ներկայացված գրականության գերակշիռ մասը բնագրից թարգմանություններ են, որոնք հրատարակվել են թե՛ Հայաստանում, թե՛ արտասահմանում՝ 1991-2019 թվականներին: Եզակի հրատարակությունները ցուցափեղկերում կլինեն մեկ շաբաթ: ՁՁ«Ցուցադրված կարող էք տեսնել նաև նույն հեղինակի գործերը տարբեր լեզուներով և հաստատել, որ ուսումնասիրությունները նույնպես տարբերվում են իրենց բովանդակային նրբերանգներով, թարգմանող երկրի և լեզվի առանձնահատկությունների լուսաբանմամբ, պատմական և մշակութային առնչությունների մեկնություններով: Մի բան ակներև է, որ ուսումնասիրողների հայացքը ավելի հաճախ ուղղվել է պատմական նախորդ շրջանների, մասնավորապես 5-րդ և միջնադարի գրականության, հայերենից թարգմանությունների»,- նշում է ընթերցասրահի վարիչ Նարինե Գևորգյանը հանգամանակից ներկայացնելով ցուցադրվող գրականությունը , այնուհետև այցելուներին հրավիրելով կինոսրահ, որտեղ ցուցադրվում էր ֆրանսիացի ռեժիսոր և սցենարիստ Անդրե Տեշինեյի 1979թ նկարահանած «Բրոնտե քույրերը» կենսագրական ֆիլմը:







84
7-60
ԿՈՄՍ

05 OCT 2011

ՄՕՆԹԷ--ՔՐԻՍԹՈՅ



ՅԱՂԵՔՍԱՆԴՐ ՏԻՒՄԱՅԷ



ԹԵՐԳՄԱՆԵԱՅ

ՏՐԿՐԱՆ ԵԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

Մասն առաջին



ԶՄԻՐՈՒԵ

ՏՊԵՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

1866

U.S.C. 501000000

(2003)

